ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ[8]

Տաթևիկ Գևորգյան

Բանալի բառեր՝ հանցագործությունների համակցություն, պատիժ, դատական պրակտիկա, վերլուծություն, փորձագիտական հարցում:

Ինչպես գիտենք, հանցագործությունների համակցության դեպքում յուրաքանչյուր հանցանքի համար առանձին պատիժ է նշանակվում: Ընդ որում, <<դատարանի կողմից սահմանվող քրեական պատիժը,- ինչպես արդարացիորեն նշում է Բ. Յա. Գավրիլովը,- ուղղակիորեն կախված է դատավորի հայեցողությունից ու սահմանվում է օրենքի տառի ու ոգու՝ նրա իմացությամբ, նրա իրավագիտակցության մակարդակով, հասարակության մեջ իր դերի գիտակցմամբ, ինչպես նաև սեփական կենսափորձով>> [1]: Երբ խոսքը հանցագործությունների համակցության համար պատիժ նշանակելու մասին է, ապա պատիժ նշանակելու սկզբունքներ ասելով՝ սովորաբար հասկանում ենք վերջնական պատիժ նշանակելու մասին օրենքում սահմանված կանոնները, որոնք կայանում են առավել ծանր պատիժն ավելի թեթևով կլանելու կամ պատիժները մասնակի և/կամ լրիվ գումարելու մեջ:

Անձի կողմից մի քանի հանցանքներ կատարելը վկայում է նրա ավելի բարձր հանրային վտանգավորության և նրա նկատմամբ՝ մեկ հանցագործություն կատարածի համեմատ, ավելի խիստ պատիժ նշանակելու անհրաժեշտության մասին:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 64 <<Պատիժ նշանակելը հանցանքների համակցությամբ>> վերտառությամբ հոդվածի համաձայն՝ հանցանքների համակցությամբ յուրաքանչյուր հանցագործության համար առանձին պատիժ (հիմնական և լրացուցիչ) նշանակելով՝ դատարանը վերջնական պատիժը որոշում է նշանակված պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով [2]:

ԼՂՀ քր. օր.-ի 64 հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ <<Եթե հանցանքների համակցությունն ընդգրկում է ոչ մեծ ծանրության հանցանքներ, ապա վերջնական պատիժը նշանակվում է նվազ խիստ պատիժն ավելի խիստ պատժով կլանելու կամ պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով: Ընդ որում, գումարելիս, վերջնական պատիժը չի կարող գերազանցել կատարված հանցանքներից առավել ծանրի համար նախատեսված առավելագույն պատիժը>>:

Հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ <<Եթե հանցանքների համակցությունն ընդգրկում է միայն միջին ծանրության կամ միջին ծանրության և ոչ մեծ ծանրության հանցանքներ, ապա վերջնական պատիժը նշանակվում է պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով: Ընդ որում, ազատազրկման ձևով վերջնական պատիժը չի կարող գերազանցել տասը տարին >>:

Հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ <<Եթե հանցանքների համակցությունն ընդգրկում է ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ, ապա վերջնական պատիժը նշանակվում է պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով: Ընդ որում, ազատազրկման ձևով վերջնական պատիժը չի կարող գերազանցել տասնհինգ

---

[8] Հոդվածն ընդունվեց 18.03.2018:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնը:

տարին: Եթե համակցության մեջ մտնող հանցանքներից մեկի համար դատարանը նշանակում է ցմահ ազատազրկում, ապա վերջնական հիմնական պատիժը որոշվում է կլանելու միջոցով:

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ հանցանքների համակցությամբ նշանակված հիմնական պատժին կարող են միացվել համակցությունը կազմող հանցանքների համար նշանակված լրացուցիչ պատիժները: Լրացուցիչ պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու դեպքում վերջնական լրացուցիչ պատիժը չի կարող գերազանցել սույն օրենսգրքի Ընդհանուր մասով պատժի տվյալ տեսակի համար սահմանված առավելագույն ժամկետը կամ չափը:

Հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պատիժը նշանակվում է սույն հոդվածի կանոններով, եթե դատավճիռ կայացնելուց հետո պարզվի, որ դատապարտյալը մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը նա կատարել է նախքան առաջին գործով դատավճիռ կայացնելը: Այս դեպքում վերջնական պատժի ժամկետին հաշվակցվում է առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը:

Կարծում ենք, որ հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու՝ գործող քրեական օրենսգրքով նախատեսված կարգը խիստ թերի է, որովհետև օրենքը չի կարգավորում որոշ իրադրություններում մի քանի արարքների որակման առանձնահատկությունները, իսկ դատական պրակտիկան այդ առումով միասնական չէ, ինչը, սակայն, շատ կարևոր է արդարացի պատիժ նշանակելու տեսանկյունից:

Հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու առանձնահատկություններն ուսումնասիրելու և օրենսգրքում առկա թերություններն ի հայտ բերելու նպատակով իմ կողմից ուսումնասիրվել է թվով 62 դատավճիռ [3]: Ստորև կներկայացնենք այն հարցերը, որոնց փորձել ենք պատասխանել դատավճիռներում առկա տեղեկատվությունից:

Անկետա

Գործ՝ ԸԻԴ……

Քրեական օրենսգրքի հոդված(մաս)՝……

Դատապարտյալների քանակը՝….

Հարցեր	*Պատասխաններ*
1. Եթե որևէ հանցանքը մյուսի բաղկացուցիչ հատկանիշն է, ապա արդյոք դա առանձին որակվում է, թե՝ ոչ: Եթե այո, ապա երբ և ինչ հիմնավորմամբ:	***ա/ Եթե որևէ հանցանքը մյուսի բաղկացուցիչ մասն է և, եթե դրա համար ավելի խիստ պատիժ է նախատեսված, առանձին որակվում է:*** ***բ/ Եթե որևէ հանցանքը մյուսի բաղկացուցիչ մասն է և, եթե դրա համար ավելի խիստ պատիժ է նախատեսված, առանձին չի որակվում:***

2. Եթե կա հատուկ նորմ և անձը կատարել է հատուկ նորմով հանցագործությունը, ապա ընդհանուր նորմով նախատեսված հանցանքն առանձին որակվում է արդյոք, եթե այդ ընդհանուր նորմով նախատեսվածն առանձին արարքով է կատարվում:	ա/ այո, ընդհանուր նորմով նախատեսված արարքն առանձին որակվում է, քանի որ ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության դեպքում արարքը որակվում է միայն ընդհանուր նորմով: բ/ ոչ, ընդհանուր նորմով նախատեսված արարքն առանձին չի որակվում, քանի որ ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության դեպքում արարքը որակվում է միայն հատուկ նորմով:
3. Հանցագործությունների իրական համակցության դեպքում, եթե մի հանցագործությունը մյուսի կատարման եղանակ է, ապա առանձին որակվում է, թե ոչ, եթե այո, ապա որ դեպքերում:	ա/ այո, առանձին որակվում է այն դեպքերում, երբ հանցավոր արարքներով անձը վնաս է պատճառում տարբեր օբյեկտներին, երբ մի հանցագործությունը մյուսի կատարման եղանակ չէ: բ/ ոչ, առանձին չի որակվում, որովհետև արարքներն ուղղված են միևնույն օբյեկտին և ծառայում են որպես վերջնական նպատակին հասնելու միջոց:
4. Հիմնականում ինչպես է դրսևորվում իրական համակցությունը. հանցանքները կապված են իրար հետ, մեկը մյուսի եղանակն է, թե պարզապես անձը մի քանի հանցանքներ է կատարել:	ա/ Իրական համակցության ժամանակ անձը կատարում է երկու կամ ավելի հանրորեն վտանգավոր արարքներ առանձին գործողություններով կամ անգործությամբ: Այդ արարքները կարող են կապված լինել իրար հետ, ասենք,օրինակ,ժամանակահատվածի առումով: բ/Իրական համակցության ժամանակ անձը կատարում է երկու կամ ավելի հանրորեն վտանգավոր արարքներ, որոնք կապված են իրար հետ և հանդիսանում են մեկը մյուսի եղանակը:

5. Իդեալական համակցությունը հիմնականում որ դեպքերին է բնութագրական՝ փաստական սխալին, անուղղակի դիտավորությամբ հանցանք կատարելուն, թե բարդ հանցակազմերին, երբ մի հանցանքը մյուսի հանցակազմի բաղկացուցիչ հատկանիշն է:	ա/ Իդեալական համակցությունը բնութագրական է փաստական սխալին: բ/ Իդեալական համակցությունը բնութագրական է անուղղակի դիտավորությամբ հանցանք կատարելուն: գ/ Իդեալական համակցությունը բնութագրական է բարդ հանցակազմերին, երբ մի հանցանքը մյուսի հանցակազմի բաղկացուցիչ հատկանիշն է:
6. Եթե շարունակվող հանցագործություն է և անձն արդեն իրականացրել է ավարտված հանցակազմ, սակայն իր վերջնական նպատակին չի հասել, ապա արդյոք մնացած մասը առանձին որակվում է:	ա/ պետք է պարզել, թե ինչ նպատակ է հետապնդում հանցագործը հանցավոր արարքներ իրականացնելիս: Եթե նրա բոլոր արարքներն ուղղված են մի նպատակի հասնելուն, ապա նա պատասխանատվություն կկրի միայն մեկ հոդվածով: բ/ եթե հանցավոր արարքները չեն հանդիսանում մեկը մյուսի եղանակ և ուղղված չեն մի ընդհանուր նպատակի, ապա անկասկած պետք է որակել համակցությամբ՝ առանձին – առանձին:
7. Եթե հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելիս վերջնական պատիժը որոշվել է պատիժները մասնակի գումարելով, ապա արդյոք հիմնավորվել է, թե ինչու է մասնակի գումարվում:	ա/ այո, սույն դատավճռում առկա է հետևյալ հիմնավորումը՝_____ _____ բ/ Սույն գործում որևէ հիմնավորում չկա:

8. Հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելիս ինչպես է լուծվում լրացուցիչ պատիժների հարցը, եթե տարբեր հանցանքների համար տարբեր լրացուցիչ պատիժներ են նշանակվել:	ա/Հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելիս լրացուցիչ պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարվում են, ընդ որում՝ վերջնական լրացուցիչ պատիժը չի կարող գերազանցել քր. Օր.-ի Ընդհանուր մասով պատժի տվյալ տեսակի համար սահմանված առավելագույն ժամկետը կամ չափը: բ/Հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելիս լրացուցիչ պատիժներից ընտրվում է միայն մեկը, չի կարելի բոլոր լրացուցիչ պատիժները նշանակել: գ/Հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելիս լրացուցիչ պատիժներ չեն նշանակվել:
9. Եթե մի հանցագործության համար պատիժը պայմանականորեն չի կիրառվել, հետո պարզվում է, որ ևս մեկ հանցանք է կատարել, ինչպես են վարվել. վերացրել են պատիժը պայմանականորեն չկիրառելը, թե՝ ոչ:	ա/այո, պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնում են և նոր դատավճռով նշանակված պատժին լրիվ կամ մասնակի գումարում նախորդ դատավճռով նշանակված պատիժը: բ/ ոչ, պատիժը պայմանականորեն չկիրառելը չեն վերացնում, ուղղակի նշանակում են նոր պատիժ:
10. Եթե համակցություն է, արդյոք դեպք է եղել, որ մեկի համար ազատեն քրեական պատասխանատվությունից:	ա/ այո բ/ ոչ

Որպես օրինակ՝ ներկայացնենք մի քանիսը.

Գործ՝ ԸԻԴ 0028/01/11

Քրեական օրենսգրքի հոդված(մաս)՝ 177-ի 3-րդ մաս, 183-ի 1-ին մաս

Դատապարտյալների քանակը՝ 1

Հարցեր – պատասխաններ

1. – ա
2. – բ
3. – ա
4. – ա

5. - ---
6. – բ
7. – բ
8. – գ
9. - ---
10. – բ

Գործ՝ ԸԻԴ 0158/01/2013

Քրեական օրենսգրքի հոդված(մաս)՝ 183-ի 2-րդ մասի 3-րդ կետ, 183-ի 2-րդ մասի 3-րդ կետ, 191-ի 2-րդ մասի 1-ին կետ, 182-ի 2-րդ մասի 3-րդ կետ

Դատապարտյալների քանակը՝ 1

Հարցեր – պատասխաններ
1. – ա
2. – բ
3. - ---
4. - ---
5. – գ
6. – բ
7. – բ
8. – գ
9. - ---
10. – ա (համաներում՝ մեկի համար)

Արդյունքներ՝
1. – ա -26
2. – բ – 32
3. – ա -50, բ – 1
4. – ա – 51
5. – գ – 12
6. – բ – 33, ա – 1
7. – բ – 62
8. – գ – 58, ա – 1
9. – ա – 4
10. – բ – 56, ա – 6

Ամփոփում՝

1 հարց. Եթե որևէ հանցանքը մյուսի բաղկացուցիչ հատկանիշն է, ապա արդյոք դա առանձին որակվում է, թե՝ ոչ: Եթե այո, ապա երբ և ինչ հիմնավորմամբ: *Իրականում շատ ճիշտ էր հենց այս հարցից սկսելը, քանի որ այն՝ 1. բխում է հանցագործությունների համակցության ինստիտուտից, 2. պրակտիկայում հաճախ կարող են դեպքեր լինել, երբ այս հարցի ոչ ճիշտ պարզաբանումը կարող է առաջացնել իրավական խոչընդոտներ՝ արդարադատություն իրականացնելիս.. Բնականաբար, առանձին որակվում է, եթե որևէ հանցանքը մյուսի բաղկացուցիչ մասն է և, եթե դրա համար ավելի խիստ պատիժ է նախատեսված: Արձանագրված արդյունքներում հանդիպել ենք 62*

գործից ընդամենը 26 նման դեպքի, և բոլոր 26 գործերով էլ արարքը ճիշտ էր որակված: Իհարկե այստեղ խնդիր կա այն առումով, որ կարծես թե խախտվում է մույն արարքի համար կրկին դատապարտվելու արգելքը. անձը պատասխանատվություն է կրում մի հանցագործության համար իսկ հետո նաև դրա բաղկացուցիչ մասի համար, որի համար արդեն պատիժ էր կրել ամբողջի շրջանակներում: Խնդրի լուծում կարող է լինել ամբողջի համար այնպիսի սանկցի նախատեսելը, որ բաղկացուցիչ մասը լրացուցիչ որակելու անհրաժեշտություն չառաջանա: Մեկ այլ տարբերակ կարող է լինել նման հանցակազմեր չնախատեսելը, որպեսզի այն հանցանքը, որը տվյալ հանցագործության եղանակ է եղել առանձին որակվի: Մեր կարծիքով վրջին մոտեցումն ավելի նպատակահարմար է:

2 հարց. Եթե կա հատուկ նորմ և անձը կատարել է հատուկ նորմով հանցագործությունը, ապա ընդհանուր նորմով նախատեսված հանցանքն առանձին որակվում է արդյոք, եթե այդ ընդհանուր նորմով նախատեսվածն առանձին արարքով է կատարվում: *Թեմայի շրջանակներում բազմիցս անդրադառձել ենք ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության հարցին, հետևաբար, չի կարող առանձին որակվել, քանի որ ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության դեպքում արարքը որակվում է միայն հատուկ նորմով: 62 գործերից 32 –ը վերաբերում էին հենց այս ինստիտուտին, բոլոր դեպքերում էլ պահպանված էին նորմերի մրցակցության կանոնները:*

3 հարց. Հանցագործությունների իրական համակցության դեպքում, եթե մի հանցագործությունը մյուսի կատարման եղանակ է, ապա առանձին որակվում է, թե ոչ, եթե այո, ապա որ դեպքերում: *Սա նույնպես խոր իրավական վերլուծություն պահանջող և պրակտիկ խնդիրներից մեկն է քրեական իրավունքում: Իրական համակցության հասկացությունը տալիս է քրեաիրավական գիտությունը, որի համաձայն՝ իրական համակցության դեպքում անձը կատարում է երկու կամ ավելի հանցագործություններ առանձին գործողություններով կամ անգործություններով: Փորձագիտական արդյունքների համաձայն՝ առանձին պետք է որակվի այն դեպքերում, երբ հանցավոր արարքներով անձը վնաս է պատճառում տարբեր օբյեկտներին, երբ մի հանցագործությունը մյուսի կատարման եղանակ չէ: Հակառակ դեպքում այն կդիտվի որպես շարունակվող հանցագործություն:*

4 հարց. Հիմնականում ինչպես է դրսևորվում իրական համակցությունը. հանցանքները կապված են իրար հետ, մեկը մյուսի եղանակն է, թե պարզապես անձը մի քանի հանցանքներ է կատարել: *Ինչպես արդեն նշել ենք, իրական համակցության ժամանակ անձը կատարում է երկու կամ ավելի հանրորեն վտանգավոր արարքներ առանձին գործողություններով կամ անգործությամբ: Այդ արարքները կարող են կապված լինել իրար հետ, ասենք, օրինակ, ժամանակահատվածի առումով, սակայն չեն կարող հանդիսանալ մեկը մյուսի եղանակը: 62 գործերից 50-ը հենց վերաբերում էին իրական համակցությանը, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ մեր դատական պրակտիկայում այն գերազանցում է իդեալական համակցությանը գրեթե 70 – 80 տոկոսով:*

5 հարց. Իդեալական համակցությունը հիմնականում որ դեպքերին է բնութագրական՝ փաստական սխալին, անուղղակի դիտավորությամբ հանցանք կատարելուն, թե բարդ հանցակազմերին, երբ մի հանցանքը մյուսի հանցակազմի բաղկացուցիչ հատկանիշն է: *Քրեական իրավունքի գիտության համաձայն՝ իդեալական համակցությունը բնութագրվում է մեկ արարքի կատարմամբ, որն իր մեջ պարունակում է քրեական օրենսգրքի երկու կամ ավելի տարբեր հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ: Իդեալական համակցության սահմանման վերլուծությունից պարզ է դառնում, որ այն հիմնականում բնութագրական է բարդ հանցակազմերին, երբ*

մի հանցանքը մյուսի հանցակազմի բաղկացուցիչ հատկանիշն է, սակայն հնարավոր են նաև փաստական սխալի և անուղղակի դիտավորությամբ կատարվող հանցանքների դեպքում: 62 գործերից ընդամենը 12-ը.. Եվ դատական պրակտիկայի մեր ուսումնասիրությունը, և փորձագիտական հարցումների արդյունքները վկայում են այն մասին, որ պրակտիկայում այդքան էլ տարածված չեն նման հանցագործությունները:

6 հարց. Եթե շարունակվող հանցագործություն է և անձն արդեն իրականացրել է ավարտված հանցակազմ, սակայն իր վերջնական նպատակին չի հասել, ապա արդյոք մնացած մասը առանձին որակվում է: *Քրեագետների կողմից բազմիցս քննարկվել է այն հարցը՝ արդյոք անհրաժեշտ է պահպանել շարունակվող հանցագործության ինստիտուտը, թե բոլոր արարքները որակել համակցությամբ: Պրակտիկ մասնագետների կարծիքով՝ անկասկած, շարունակվող հանցագործության ինստիտուտը պետք է պահպանել: Սխալ կլինի բոլոր հանցանքներն որակել համակցությամբ: Դա առաջին հերթին կախված է նրանից, թե ինչ նպատակ է հետապնդում հանցագործը հանցավոր արարքներ իրականացնելիս: Եթե նրա բոլոր արարքներն ուղղված են մի նպատակի հասնելուն, ապա նա պատասխանատվություն կկրի միայն մեկ հոդվածով: Եթե հանցավոր արարքները չեն հանդիսանում մեկը մյուսի եղանակ և ուղղված չեն մի ընդհանուր նպատակի, ապա պետք է որակել համակցությամբ՝ առանձին – առանձին:*

7 հարց. Եթե հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելիս վերջնական պատիժը որոշվել է պատիժները մասնակի գումարելով, ապա արդյոք հիմնավորվել է, թե ինչու է մասնակի գումարվում: *Չենք կարող չանդրադառնալ այն խնդրին, որ ոչ մի դատավճռում որևէ հիմնավորում չկար, թե ինչու է հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելիս վերջնական պատիժը որոշվել պատիժները մասնակի գումարելով: Օրենքը որևէ ցուցում չի պարունակում նույնիսկ այն մասին, թե հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելիս որ դեպքում պետք է օգտվել կլանելու, որ դեպքում գումարելու սկզբունքից: Սակայն, դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանները կլանելու սկզբունքը ավելի հաճախ կիրառում են, երբ առկա է մեծ տարբերություն կատարված հանցանքների վտանգավորության աստիճանի միջև: Կարծում ենք՝ շատ կարևոր է, որպեսզի դատավորները հանցագործությունների համակցությամբ վերջնական պատիժ նշանակելիս հիմնավորեն իրենց որոշումը: Դա ավելի կնպաստի այս ինստիտուտի ճիշտ ընկալմանը և արդյունավետ կիռարմանը: Բացի այդ, կարծում ենք, որ օրենքով պետք է նախատեսել որոշակի չափանիշներ այս կամ այն կանոնը կիրառելու համար:*

8 հարց. Հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելիս ինչպես է լուծվում լրացուցիչ պատիժների հարցը, եթե տարբեր հանցանքների համար տարբեր լրացուցիչ պատիժներ են նշանակվել: *Հանցագործությունների համակցությամբ լրացուցիչ պատիժների նշանակման կարգը սահմանված է հենց քր. Օր.-ի 64-րդ հոդվածի 5-րդ մասում, որի համաձայն՝ հանցանքների համակցությամբ նշանակված հիմնական պատժին կարող են միացվել համակցությունը կազմող հանցանքների համար նշանակված լրացուցիչ պատիժները: Լրացուցիչ պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու դեպքում վերջնական լրացուցիչ պատիժը չի կարող գերազանցել սույն օրենսգրքի Ընդհանուր մասով պատժի տվյալ տեսակի համար սահմանված առավելագույն ժամկետը կամ չափը: 62 դատավճիռներից 59-ում առկա էր լրացուցիչ պատիժ նշանակելու հարցը, որից միայն մեկում էր այն կիրառվել: Ելնելով դատավճիռների բովանդակությունից՝ կարծում ենք, որ այստեղ դատարանի հետ համաձայնելու կամ չհամաձայնելու խնդիր չպիտի առաջանա, չնայած՝ որևէ հիմնավորում նշված չէր այդ կապակցությամբ:*

9 հարց. Եթե մի հանցագործության համար պատիժը պայմանականորեն չի կիրառվել, հետո պարզվում է, որ ևս մեկ հանցանք է կատարել, ինչպես են վարվել. վերացրել են պատիժը պայմանականորեն չկիրառելը, թե՝ ոչ: *Այս հարցն իրենից առանձին հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ օրենսդրորեն դեռ այդքան էլ հստակ կարգավորում չունի: Թեև քր. օր.-ի 64 հոդվածի 6-րդ մասի մեկնաբանությունից բխում է, որ նման դեպքերը որակվում են հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու կանոնով, սակայն քր.օր.-ի 69 հոդվածում (պատիժը պայմանականորեն կիրառելը) նշված են այն սպառիչ հիմքերը, որոնց դեպքում դատարանը կարող է (որոշ դեպքերում պարտավոր է) վերացնել պատիժը պայմանականորեն չկիրառելը: Այսպես, համաձայն այդ հոդվածի՝ դատարանը կարող է վերացնել պատիժը պայմանականորեն չկիրառելը, եթե՝*

- դատապարտյալը չարամտորեն խուսափում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելուց,

- անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք է կատարում:

Դատարանը միանշանակ վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը, եթե դատապարտյալը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր դիտավորյալ հանցանք:

Տվյալ դեպքում պատիժ է նշանակվում դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու կանոնին համաձայն:

Փաստորեն, այս հիմքերի շարքում, որոնք հիմք են հանդիսանում պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու համար, նշված չէ այնպիսի հիմք, երբ պարզվում է, որ պայմանական դատապարտվածը մինչև դատապարտվելը կատարել է ևս մեկ հանցանք:

Կարծում ենք, որ տվյալ իրավիճակին օրենսդրական լուծում կարող է տրվել, եթե քր.օր.-ի 69 հոդվածի 8-րդ մասով սահմանվի հետևյալ դրույթը.

<<Եթե պարզվի, որ պայմանական դատապարտված անձը մինչև դատավճիռ կայացնելը կատարել է ևս մեկ միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր դիտավորյալ հանցանք, ապա դատարանը վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը և պատիժ է նշանակում սույն օրենսգրքի 64 հոդվածի կանոններին համաձայն>>:

62 դեպքից նման իրավիճակ կար միայն 4-ում, և, հաշվի առնելով վերոնշյալը, կարծում ենք դատարանը ճիշտ է վարվել՝ վերացնելով պատիժը պայմանականորեն չկիրառելը և նոր դատավճռով նշանակված պատժին լրիվ կամ մասնակի գումարելով նախորդ դատավճռով նշանակված պատիժը:

10 հարց. Եթե համակցություն է, արդյոք դեպք է եղել, որ մեկի համար ազատեն քրեական պատասխանատվությունից: *Քանի որ հանցագործությունների համակցության ժամանակ անձը պատասխանատվություն է կրում յորաքանչյուր արարքի համար առանձին – առանձին, հետևաբար տրամաբանական է, որ հնարավոր են դեպքեր, երբ մեկի համար ազատվի քրեական պատասխանատվությունից, իսկ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը սահմանված են քրեական օրենսդրությամբ: 62 գործերից 6-ում հենց առկա էր նման իրադրություն, և հիմնականում մեկ արարքի համար քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերն էին տուժողի հետ հաշտվելն ու համաներումը:*

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք հավաստել, որ հանցագործությունների համակցության դեպքում արարքի որակման ու պատիժ նշանակելու հարցերը մեր օրենսդրությամբ այդքան էլ հստակ կարգավորված չեն, ինչը հետագա խոր հետազոտությունների անհրաժեշտություն է առաջացնում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Кудрявцев В. Н. Теоретические основы квалификации преступлений. М., 1999, էջ 214-215:
2. ԼՂՀ քրեական օրենսգիրք, 2013, էջ 47:
3. ԼՂՀ Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 2011 – 2017 թթ. կայացված դատավճիռներ՝ համակցության գործերով:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հանցագործությունների համակցության դեպքում պատիժ նշանակելու առանձնահատկությունները Արցախի Հանրապետության դատական պրակտիկայում

Տաթևիկ Գևորգյան

Հոդվածում վեր են հանվել հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու հիմնախնդիրները, որոնք կապված են դատական պրակտիկայի հետ: Հեղինակի կողմից ուսումնասիրվել է թվով 62 դատավճիռ, որոնց վերլուծության արդյունքում հնարավորինս անդրադարձ է կատարվել թե դատական պրակտիկայում, թե օրենսդրական դաշտում հանդիպող խնդիրներին և թերություններին: Ինչպես նաև հեղինակի կողմից արվեցին մի շարք նոր առաջարկություններ, որոնք հետագայում կարող են օգնել այդ խնդիրների լուծման և նշված ինստիտուտի կատարելագործման հարցում:

РЕЗЮМЕ

Особенности назначения наказания по совокупности преступлений в судебной практике Республики Арцах.

Татевик Геворгян

Ключевые слова: *совокупность преступлений, наказание, судебная практика, анализ, экспертный опрос.*

В статье рассматриваются проблемы судебной практики по назначению наказания по совокупности преступлений. Автором были рассмотрены 62 вердикта по данной теме, выявлены все возможные проблемы и недостатки, касающиеся и судебной практики, и законодательной сферы. Так же были сделаны новые предложения, которые в дальнейшем могли бы способствовать решению этих проблем и усовершенствованию данного института.

SUMMARY

The principles of imposition of punishment on multiple offences in judicial practice of the Republic of Artsakh

Tatevik Gevorgyan

Keywords: *multiple offences, punishment, judicial practice, analysis, expert survey.*

The article considers the issues of judicial practice in imposition of punishment on multiple offences. The author has examined 62 verdicts on this topic and identified all possible issues and disadvantages concerning the both judicial practice and the legislative sphere. He has also made new proposals, which in the future could contribute to the solution of these problems and the improvement of this institution.